

ՀՈՒՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1918—1920 ԹԹ.)

Մ. Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայաստանի առաջին Հանրապետության (ՀՀ) զինված ուժերի ստեղծման պատմությունը, շնայած հրապարակի վրա եղած որոշակի գրականությանը (հիմնականում հուշագրային), հայ պատմագրության ամենաքիչ ուսումնասիրված հարցերից մեկն է: Աշխատություններ¹, որոնցում ուղղակիորեն կամ մասնակիորեն շոշափվում է ՀՀ զինված ուժերի ստեղծման խնդիրը, հնարավորություն չեն ընձեռում ամբողջական ու օբյեկտիվ պատկերացում կազմել պետական շինարարության այդ ոլորտի մասին:

Հայոց բանակի կազմավորման գործընթացը, լինելով ՀՀ պատմության մի անքակտելի մասը, խորհրդային իշխանության տարիներին, հասկանալի պատճառներով, խեղաթյուրված է ներկայացվել, իսկ հաճախ էլ անտեսվել:

Այսօր, երբ մեր ժողովուրդը վերականգնում է իր անկախ պետականությունը, հայ պատմաբանների առջև ծառայել է կարևորագույն խնդիր՝ ձերբազատվել նախկինում թույլ տրված խեղաթյուրումներից ու թերի գնահատականներից և տալ մեր ժողովրդի անցած պատմական ուղու ճշմարտացի ու անաչառ պատկերը:

Ի թիվս մի շարք այլ հարցերի, նորովի լուսաբանման կարոտ է նաև 1918—1920 թթ. ՀՀ զինված ուժերի պատմությունը:

Հայկական բանակի կազմավորման և գործունեության համակողմանի ու գիտական ուսումնասիրությունը, նրա թույլ և ուժեղ կողմերի բացահայտումը մեզ հնարավորություն կտա խուսափել նաև այսօրվա ռազմական շինարարության գործում հնարավոր սխալներից:

Սույն հոդվածի մեջ մենք փորձում ենք ընդհանուր գծերով ներկայացնել ՀՀ զինված ուժերի ստեղծման գործընթացը և կառուցվածքը:

1918 թ. մայիսին, շուրջ 600 տարվա դադարից հետո, չափազանց դժվարին արտաքին ու ներքին պայմաններում վերականգնվեց հայկական պետականությունը և ստեղծվեց ՀՀ: Նորաստեղծ ՀՀ կողմից ստորագրված առաջին միջազգային փաստաթուղթը Թուրքիայի հետ 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված պայմանագիրն է: Թուրքիան այդ պայմանագրով փաստորեն էանաչեց Հայաստանը որպես անկախ պետություն, սակայն, միաժամանակ

¹ Տե՛ս Ա. Բաբայան, Էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Գաբիրե, 1959, Հ. Իրազեկ, Մոտիկ աճցալից, Բեյրութ, 1956, Ա. Նափուճյան, Հայաստանի Հանրապետության քաղաքական, զինվորական, տնտեսական, ընկերային կացությունը, Գաբիրե, 1972, Հ. Սահակյան, Երկու տարի հայկական բանակի մեջ, Փարիզ, 1937:

օգտվելով նրա թուլությունից, պարտադրեց շէ իր վրա վերցնել մի շարք ծանրը և նվաստացուցիչ պարտավորություններ²:

Ի թիվս այլ պարտավորությունների, շէ պետք է անհապաղ ձեռնամուխ լիներ հայկական կորպուսի կազմավորմանը: Շէ թույլատրվում էր ունենալ հետևակային մեկ դիվիզիայից բաղկացած զինված ուժեր, որոնց զորամասերի տեղաբաշխումը պետք է համաձայնեցված լիներ Թուրքիայի հետ³: Հայաստանի առաջին կառավարությունը, ելնելով այդ պայմաններից, ռազմական շինարարության ոլորտում իր առջև խնդիր դրեց՝ «վերակազմել երկրի զինված ուժերը՝ նպատակ ունենալով ստեղծել թվով ոչ մեծ, բայց ոգով ու կարգապահությամբ ուժեղ բանակ»⁴:

Կազմակերպվող միակ դիվիզիայի հիմքը կազմեցին դեռևս 1917 թ. նոյեմբերի 19-ի ժամանակավոր կառավարության հատուկ հրահանգով Անդրկովկասում կազմակերպված և 1918 թ. մայիսյան հերոսամարտերից հետո նորաստեղծ շէ կառավարության տրամադրության տակ անցած հայկական սախկին բանակային կորպուսի զորամասերը⁵: 1918 թ. հուլիսի 20-ի դրությամբ կորպուսի շարքերում հաշվվում էին մոտավորապես 60 առանձին զորամասեր և ստորաբաժանումներ⁶:

Շէ զինվորական առաջին նախարար գեներալ Հ. Հախվերդյանի վկայությամբ՝ դիվիզիայի կազմավորման գործընթացում հրամանատարությունը նրկատի է ունեցել երկու կարևոր հանգամանք. առաջին՝ շխախտել շէ ստանձնած պարտավորությունները, երկրորդ՝ դիվիզիային տալ կազմակերպական այնպիսի կառուցվածք, որը անհրաժեշտության դեպքում առանձին զորամասերին հնարավորություն կտար գործել ինքնուրույնաբար և քաղաքական իրավիճակի փոփոխության դեպքում առավել հեշտության մեջ դիվիզիան վերածել բանակային կորպուսի⁷: Այս նկատառումներով էլ դիվիզիան կազմվեց վեց հետևակային գնդերից՝ յուրաքանչյուրում ունենալով երեքական գումարտակ: Սկզբում այս գնդերը միավորված էին հետևակային երկու բրիգադների մեջ, որոնցից յուրաքանչյուրում կար երեքական գունդ: Դիվիզիայի հրեռանին կազմված էր հրետանային մեկ բրիգադից (երկու թեթև, շորս լեռնային և մեկ հաուբիցային մարտկոց)՝ միավորված երեք հրետանային դիվիզիոնի ու հրետանային պարկի մեջ⁸: Դիվիզիայի հրետանու կազմակերպական նման կառուցվածքը անհրաժեշտության դեպքում հնարավորություն էր տալիս յուրաքանչյուր հետևակային բրիգադի տրամադրել հրետանային իր դիվիզիոնը, ինչը զգալիորեն ուժեղացնում էր հետևակային բրիգադների մարտական հզորությունը: Դիվիզիայի հեծելազորը կազմված էր համահավասար հեծյալ գրնդից⁹: Վերոհիշյալ զորամասերից բացի դիվիզիայի կազմի մեջ էին մտնում նաև ինժեներական վաշտը, ավիացիոն ու ռադիոհեռագրային ջոկերը, ավտոմոբիլային և ուսումնական զորախմբերը, դիվիզիոնային տրանսպորտի ստորաբաժանումը, վիրակապող ջոկատը և անասնաբուժական լաբարեթը¹⁰:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական պետական արխիվ (ՀՀ ԿՊՊԱ), ֆ. 222, ց. 1, գ. 24, թ. 332:

³ Տե՛ս նույն տեղը, թ. 323:

⁴ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 188:

⁵ Տե՛ս Ա. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կոնվենտը, Երևան, 1984, էջ 81, նաև՝ գեներալ Թ. Նազարբեկյանի Ռուշագրերը, ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16, թ. 15—16:

⁶ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 1—5:

⁷ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 1:

⁸ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 4:

⁹ Տե՛ս նույն տեղը:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

1918 թ. օգոստոսի 15-ին դիվիզիան հիմնականում կազմավորված էր, և զորքերը ընդունել էին վերոհիշյալ դիվիզիական կառուցվածքը:

ՀՀ զինված ուժերի բարձրագույն հրամանատարությունը հիմնականում իր վրա վերցրեց հայկական կորպուսի հրամանատարական կազմը, ինչպես նաև Անդրանիկի հատուկ հայկական դիվիզիայի և Կովկասյան ռազմաճակատում մարտնչող նախկին ռուսական բանակի բարձրաստիճան սպաները, որոնք ցանկություն էին հայտնել ծառայելու հայկական բանակում¹¹: Դիվիզիայի՝ ինչպես վարչական կառույցները, այնպես էլ ստորաբաժանումները հիմնականում տեղակայվեցին Արարատյան դաշտավայրում: Դիվիզիայի շտաբը տեղավորվեց Երևանում, ուր և գտնվում էր հետևակային առաջին բրիգադի շտաբը: Երկրորդ բրիգադի շտաբը գտնվում էր Վաղարշապատում: Երևան—Վաղարշապատ—Դամարու շրջանում տեղաբաշխվեցին 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հետևակային գնդերը՝ իրենց հրետանիով: 5-րդ գունդը տեղակայվեց Դարաքիլիսայի, իսկ 6-րդը՝ Դիլիջանի շրջանում¹²:

Դիվիզիայի կազմավորման հետ միաժամանակ Երևանում ստեղծվեցին բարձրագույն զինվորական կառույցներ: Զինված ուժերի ընդհանուր ղեկավարությունը իրականացնելու համար Հայաստանի կառավարության մեջ ըստ ստեղծվեց զինվորական նախարարություն: Նրա կազմում որպես վարչական մարմին գործում էր ռազմական շտաբը (սպայակուլյտը)՝ բաղկացած զորահավաքային ու հրահանգչական բաժիններից, գրասենյակից ու սպայակուլյտի վաշտից¹³: Սկզբնական շրջանում զինվորական նախարարության մեջ որպես վարչական մարմիններ մտնում էին նաև հրետանային, համբարակային, ռազմա-բժշկական, ինժեներական ու ռազմա-անասնաբուժական վարչությունները¹⁴: Ավելի ուշ, վերոհիշյալ վարչություններից բացի, կազմակերպվեցին նաև ռազմական գերատեսչության գեներալ-վերահսկիչի և զորքերի բնակարանային բավարարման վարչությունները¹⁵:

Բանակի ռազմա-դատական մարմինները բաղկացած էին ռազմական դատարանից ու ռազմա-դատախազական հսկողական մարմնից¹⁶:

1919 թ. սկզբին ՀՀ ռազմական նախարարությանն առընթեր ստեղծվեց նաև ռազմական խորհուրդ, որը կուլեգիալ ձևով պետք է քննարկեր ռազմական շինարարության ու մարտական գործողությունների կազմակերպման ըսկզբունքային հարցերը և որոշումներ կայացնեի դրանց վերաբերյալ: Ռազմական խորհրդի կազմի մեջ մտան դիվիզիայի ավագ զորահրամանատարներն ու զինվորական նախարարության վարչությունների պետերը¹⁷: 1919 թ. մարտի

¹¹ Դիվիզիայի հրամանատար Աշահակյան Գալստյան Գալստյան կորպուսի առաջին դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը, իսկ շտաբի պետ՝ գնդապետ Զինկևիչը: Առաջին հետևակային բրիգադի հրամանատար Աշահակյան գնդապետ Դ. Բեկ Փիրումյանը, իսկ երկրորդինը՝ գնդապետ Բաղդասարյանը: Հրետանային բրիգադի հրամանատարությունը Քանաքեպոստի փոխգնդապետ Արարատյանին (հետագայում զինվորական նախարար), իսկ Քանաքեպոստի փոխգնդապետ Գևորգյանին (հետագայում նաև հետևակային բրիգադի) հրամանատար Աշահակյան գնդապետ Ղորղանյանը: Տե՛ս ֆ 204, ց. 1, գ. 42, թ. 12:

¹² Դիվիզիայի կազմավորման գործընթացի, ձևավորված զորամասերի, նրանց տեղաբաշխման վերաբերյալ տվյալները բերված են Ռիմսկակոմով ՀՀ առաջին զինվորական նախարար գեներալ-մայոր Հ. Հախվերդյանի անտիպ Քուշերից (Военные очерки об Армянском с 1918 по 1920 г.г.), որոնք գտնվում են ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 1—20, ինչպես նաև արխիվային այլ փաստաթղթերից:

¹³ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 51, թ. 161:

¹⁴ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 2:

¹⁵ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 290, ց. 1, գ. 9, թ. 1:

¹⁶ Տե՛ս նույն տեղը:

¹⁷ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 2:

25-ին այդ խորհրդի անփոփոխ նախագահ նշանակվեց հայկական կորպուսի նախկին հրամանատար գեներալ-լեյտենանտ Թ. Հ. Նազարբեկյանը¹⁸։ Հետագայում (1919 թ. մարտ) նրան հանձարարվեց նաև ՀՀ զորքերի գլխավոր հրամանատարի պարտականությունը¹⁹։

1919 թ. հունվարի դրուժյամբ ՀՀ զինված ուժերի շարքերում, ներառյալ շարային զորամասերն ու վարչությունները, կար 15.878 մարդ²⁰։

1918 թ. վերջին Գերմանիան և իր դաշնակիցները պարտություն կրեցին պատերազմում, և Թուրքիան հարկադրված էր իր զորքերը դուրս բերել ՀՀ տարածքներից։ Ստեղծված պայմաններում կառավարությունը որոշում ընդունեց իր զորքերով զբաղեցնել Թուրքերի կողմից պարպված հայկական տարածքները²¹։ Կառավարության վերոհիշյալ ծրագիրը իրականացնելու և եղած սակավաթիվ զորամասերը առավել արդյունավետ օգտագործելու նպատակով 1919 թ. հունվարից հայկական զինված ուժերում անցկացվեցին կազմակերպական որոշ փոփոխություններ։ Նախկին հետևակային երկու բրիգադների փոխարեն կազմակերպվեցին երեք բրիգադներ (երրորդ բրիգադի շտաբը տեղավորվեց Ղարաքիլիսայում)՝ յուրաքանչյուրում երկուական գունդ²²։ Համահավաք հեծյալ գունդը վերակազմավորվեց երկու գնդից բաղկացած հեծելազորային բրիգադի²³։ Մի փոքր անց, 1919 թ. ապրիլ-մայիս ամիսներին, օգտվելով արտաքին բարենպաստ պայմաններից (մասնավորապես դաշնակից երկրների կողմից Հայաստանը 1914 թ. սահմաններով ճանաչման փաստից և Բաթումի պայմանագրի ուժը կորցնելու հանգամանքից), ՀՀ կառավարությունը հնարավորություն ստացավ ավելացնել իր զինված ուժերը։

1920 թ. օգոստոսի դրուժյամբ ՀՀ զինված ուժերը ունեին շորս հետևակային բրիգադ՝ ինը գնդով, երկու սահմանապահ բրիգադ, մեկ հեծելազորային բրիգադ՝ երկու գնդով, 11 պուանձին (հետևակային, երեք պահակային երեք, միլիցիայի երկու, էտապային մեկ, հատուկ մեկ և ինժեներական մեկ) գումարտակներ, հրետանային շորս դիվիզիոն՝ 16 (տասը լեռնային, շորս թեթև, երկու հաուբիցային) մարտկոցով, կամավորական պարտիզանական յոթ հարյուրյակ, երկու զրահագնացք («Սասուն» և «Ազատամարտ»), ավիացիոն ջոկատ և նավատորմ Սևանի վրա²⁴։ Նույն ժամանակահատվածում ՀՀ զինված ուժերում (ներառյալ թիկունքային ծառայությունները, զինվորական ոստիկանություն ստորաբաժանումները և կամավորական խմբերը) հաշվվում էր շուրջ 40 հազար մարդ²⁵։

Որոշակի մարտական առաջադրանքներ իրականացնելու նպատակով հայկական բանակի զորամասերն ու ստորաբաժանումները միավորված էին զորախմբերի և ջոկատների մեջ։ 1920 թ. օգոստոսի մեկի դրուժյամբ բանակի կազմում կային հետևյալ զորախմբերն ու ջոկատները. Ալեքսանդրապոլի (շտաբը գտնվում էր Կարսում) և Արևելյան (շտաբը՝ Ղարանլուղում) խմբերը, ինչպես նաև Դարալագյազի (շտաբը՝ Քեշիշքենդում), Նոր Բայազետի (շտաբը՝ Նոր Բայազետում), հատուկ էքսպեդիցիոն (շտաբը՝ Քեշիշքենդում), Շարուրի

¹⁸ Ցե'ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 131, թ. 14:

¹⁹ Ցե'ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 129, թ. 1:

²⁰ Ցե'ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 35, թ. 17:

²¹ Ցե'ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 13:

²² Ցե'ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 128:

²³ Ցե'ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 51, թ. 162:

²⁴ Ցե'ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 290, ց. 1, գ. 9, թ. 1—3:

²⁵ Ս. Վրացյան, Ըշվ. աշխ., էջ 435:

(շտաբը՝ Շահթախթում) և Դիլիջան—Ղարաքիլիսայի (շտաբը՝ Դիլիջանում) ջոկատները²⁶։

1919 թ. սկզբին սկսվեց այսպես կոչված Սևանի նավատորմի կազմավորումը։ Սկզբնական շրջանում այն բաղկացած էր շարժիչներով սարքավորված մի քանի թիանավերից ու առագաստանավերից, որոնք հիմնականում զբաղվում էին կենդանի ուժի ու ռազմաբեռների փոխադրմամբ²⁷։ Դրանցից մի քանիսի վրա (օրինակ «Աշոտ Երկաթ» առագաստանավի վրա) տեղադրված էին արագաձիգ հրանոթներ։ Սևանի նավատորմը համալրելու նպատակով Շարուրից Երևանի միջով Ելենովկա (ներկայումս՝ Սևան քաղաք) փոխադրվեց ռուսական բանակից մնացած (նախատեսվում էր այն ուղարկել Վան) «Սեստրիցա Նյուշա» նավը, որը վերանվանվեց «Գեղանուշ»։ Միևնույն ժամանակ Ելենովկայում հիմնադրված նավաշինարանում աշխատանքներ էին տանում նոր նավերի կառուցման ուղղությամբ²⁸։

Հայկական բանակի կազմում կար նաև ոչ մեծ ավիացիոն ջոկատ, որի տրամադրության տակ կային ռուսական բանակից մնացած ինքնաթիռներ։ Հետագայում ՀՀ կառավարությունը արտասահմանից գնեց ևս մի քանի ինքնաթիռ²⁹։ Հայկական բանակի համար ինքնաթիռներ ձեռք բերելու գործում մասնակցություն ունեցավ նաև Փարիզի խաղաղության կոնֆերանսի հայկական Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշան, որն անձամբ իր միջոցներով գնեց մեկ ինքնաթիռ³⁰։ Ավիաջոկատը հիմնականում օգտագործվում էր հետախուզական նպատակների համար և բազավորված էր կարսում³¹։

Ժառանգելով հայկական նախկին կորպուսի սպառազինությունը՝ Հանրապետության բանակը հիմնականում զինված էր այն նույն զենքով, ինչ որ ռուսական բանակը։ Հետևակի հիմնական զենքը Մոսին համակարգի եռագիծ հրացանն էր, կային նաև լեբելի ու Բերդանի համակարգի հրացաններ։ Գրնդացիներին սպառազինության մեջ կային Մաքսիմ, Կոլտ և Լյուիս, ինչպես նաև ոչ մեծ քանակությամբ այլ համակարգերի գնդացիներ։ Հրետանին բաղկացած էր հիմնականում երեք դյուլմանոց թեթև ու լեռնային թնդանոթներից, ինչպես նաև ռուսական մակնիշի 48 մմ հաուբիցներից³²։ Բանակի հանդերձանքը ևս ռուսական արտադրության էր, որ մնացել էր ռուսական զորքերից։

Հետագայում բանակի սպառազինության ու հանդերձավորման կարիքները բավարարվում էին դաշնակից տերությունների, մասնավորապես Անգլիայի առաքումների հաշվին։ Այսպես օրինակ՝ 1920 թ. մայիս-հոկտեմբեր ամիսների ընթացքում Անգլիան հայկական բանակին տրամադրեց 29.200 կոմպլեկտ հանդերձանք ու հանդերձասարք³³, ինչպես նաև 25.000 միավոր հրազեն³⁴։ Զենքով ու զինամթերքով հայկական բանակին Անգլիայի ցուցաբերած օգնության ընդհանուր գումարը 1920 թ. կազմեց 1.200.000 անգլիական ֆունտ ստեռլինգ³⁵։

²⁶ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 290, ց. 1, գ. 9, թ. 1։

²⁷ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 186։

²⁸ Տե՛ս Ա. Վրացյան, Աշվ. աշխ., էջ 435, տե՛ս Անն Աույմի, Կյանքի ուղիներով, Գա-Ռրոն, 1955, Բ. Ա, էջ 228։

²⁹ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 442, թ. 165։

³⁰ Տե՛ս «Վերածնունդ» ամսագիր, Փարիզ, 1919, № 20—37, էջ 581։

³¹ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 442, թ. 165։

³² Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 41, թ. 5։

³³ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 86։

³⁴ Տե՛ս Հ. Տեր-Հակոբյան, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 86։

³⁵ Տե՛ս Ա. Խատիսյան, Հասարակական հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյ-րութ, 1968, էջ 183։

Հայկական բանակը զգալի օգնություն էր ստանում նաև գեներալ Ա. Յ. Դենիկինի՝ Ռուսաստանի հարավի կամավորական բանակից, որի հետ կապը հաստատվել էր 1918 թ. նոյեմբերից, երբ որպես ՀՀ կառավարությունն առն-
թեր ուղարկված ներկայացուցիչ նշանակվեց գեդապետ Լեսլին³⁶, Մասնավոր-
ապես, գեներալ Դենիկինի բանակից 1920 թ. մայիս-հունիս ամիսների ըն-
թացքում հայկական բանակի համար ստացվեց Մոսկի հրացանի մոտ 3.000.000
փամփուշտ³⁷: Հետագայում հայկական բանակը որոշ օգնություն ստացավ
նաև գեներալ Պ. Ն. Վրանգելից³⁸:

Չնայած ստեղծված չափազանց ծանր ներքին ու արտաքին իրավիճակին
և երկրում շուտափույթ լուծումներ պահանջող բազմաթիվ խնդիրների առկա-
յությունը, ՀՀ կառավարությունն ու նրա խորհրդարանը մեծ ուղադրություն էին
դարձնում զինված ուժերի կառուցմանը՝ բավականին խոշոր դրամական մի-
ջոցներ հատկացնելով բանակի կարիքների համար: Այսպես, 1918 թ. հոկ-
տեմբերից մինչև 1920 թ. սեպտեմբեր ընկած ժամանակաընթացքում խոր-
հրդարանի ու կառավարության որոշումներով այդ կարիքների համար հատ-
կացվել է մոտ 690.000.000 ռուբլի³⁹: Կարո Սասունու տվյալներով բանակի
կարիքների համար ՀՀ ծախսում էր պետական բյուջեի 85 տոկոսը⁴⁰:

Միաժամանակ, բանակում զենքի ու նյութերի պակասը լրացնելու նպա-
տակով, ՀՀ կառավարությունը ընդունեց բռնագրավումների վերաբերյալ մի
շարք օրենքներ, համաձայն որոնց բանակի կարիքների համար ազգաբնակ-
չությունից առգրավվում էր զենք⁴¹, ինչպես նաև ավտոմոբիլային ու ավիա-
ցիոն տեխնիկայի պահեստամասեր⁴²:

Դրա հետ մեկտեղ Հայաստանի կառավարությունը ուղադրություն էր
դարձնում նաև սեփական ուղարկված արդյունաբերության ստեղծման ու զար-
գացման հարցերին: Կարսում և Ալեքսանդրապոլում ռուսական քանակից մը-
նացած զինապահեստների հիման վրա կազմակերպվեցին ուղարկված գոր-
ծարաններ, որոնք մասնագիտացված էին փամփուշտի արտադրությամբ⁴³:
Երևանում ու Կարսում գոյություն ունեցող ինժեներական պահեստներին կից
արհեստանոցներում բանակի համար պատրաստում էին ամեն տեսակի հան-
դերձասարք ու իրեղեն: Այստեղ էին պատրաստում նաև պայթուցիկ նյութեր,
այդ թվում նաև՝ դինամիտ ու պիրոքսիլին⁴⁴: Բոլոր այս գործարանները են-
թարկվում էին զինվորական նախարարության համբարակային վարչությանը:
Զինվորական նախարարության տնօրինության տակ էին գտնվում նաև հան-
րերձանքի ու կոշկեղենի պատրաստման արհեստանոցները, որոնք տեղավոր-
ված էին Ալեքսանդրապոլում ու Կարսում: Ալեքսանդրապոլում էր գտնվում
նաև բանակի համար երկձի սայլակառքեր և դաշտային խոհանոցներ պատ-
րաստող արհեստանոցը⁴⁵:

³⁶ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 7:

³⁷ Տե՛ս Ռուբեհ, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Բ. Է, Թեհրան, 1982, էջ 261:

³⁸ Տե՛ս Кузнецова. Крах турецкой интервенция в Закавказье в 1920—1921 гг.—
«Вопросы истории». 1951. № 9. է. 145:

³⁹ Տե՛ս Հայաստանի Խորհրդի հաստատած օրենքները, Մ—1918, Մ—1919, Մ—1920
թթ., ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 137, ֆ. 199, ց. 1, գ. 65, թ. 144, ֆ. 200, ց. 1,
գ. 33, թ. 27—28, թ. 38, թ. 60, թ. 76, ֆ. 204, ց. 1, գ. 216, թ. 1, թ. 13:

⁴⁰ Տե՛ս Կ. Սասունի, Հայ-թրքական պատերազմը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն,
1928, № 11—12, էջ 110:

⁴¹ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 27:

⁴² Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 216, թ. 3:

⁴³ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 188:

⁴⁴ Տե՛ս նույն տեղը:

⁴⁵ Տե՛ս նույն տեղը:

1919 թ. կեսերին ՀՀ կառավարությունը և խորհրդարանը, օգտվելով երկրի ներքին իրավիճակի համեմատական կայունացումից և բարենպաստ արտաքին պայմաններից, ընդունեցին մի շարք օրենսդրական ակտեր, որոնցով արտոնվում էր ավագ տարիքի զինծառայողների զորացրումը և կարգավորվում զինակոչվողների ու նրանց զինվորագրման կարգը:

Համաձայն 1919 թ. հուլիսի 1-ի հրամանի՝ բանակից զորացրվում էին 25 տարեկանից բարձր տարիք ունեցող զինվորները: Այնուհետև ՀՀ քաղաքացիների զինվորական ծառայության ժամկետը սահմանվում էր 18 տարի, որից երեք տարին՝ որպես իսկական զինվորական ծառայություն, իսկ 15 տարին՝ որպես պահեստազորային: Իսկական զինվորական ծառայության էին զորակոչվում 20 տարեկան հասակում: Արտոնություններ տրվում էին անաշխատունակ ծնողներ ունեցող ընտանիքի միակ կերակրողներին⁴⁶:

Զորակոչի ենթակա չէին նաև փոստ-հեռագրատան հիմնարկությունների ծառայողները (բացի ցրիչներից ու պահակներից), երկաթգծի, ինչպես նաև միլիցիայի ու դատական մարմինների աշխատակիցները⁴⁷:

Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, բացառությամբ եզդիների, զինվորական ծառայության չէին զորակոչվում: Սկզբնական շրջանում, նկատի ունենալով ՀՀ սահմանների անորոշությունը ու հպատակության վերաբերյալ օրենքի բացակայությունը, բանակ զորակոչվելու ենթակա չէին նաև արևմտահայերը⁴⁸: Սակայն կառավարության 1919 թ. սեպտեմբերի իննին ընդունած որոշումով զորակոչի ենթարկվեցին և արևմտահայերը⁴⁹: Իսկ 1920 թ. մայիսի 8-ի ՀՀ կառավարության օրենքի համաձայն բանակ զորակոչվելու ենթակա էին նաև ՀՀ պետական ծառայության մեջ գտնվող օտարերկրյա պետությունների, ինչպես նաև Հայաստանում բնակվող հարավային Ռուսաստանի, Ադրբեյջանի ու Վրաստանի հայազգի հպատակները⁵⁰:

1920 թ. սեպտեմբերից Հայաստանի Հանրապետության վրա կախվեց քեմալական ագրեսիայի վտանգը, և կառավարությունը կանգնեց բանակի թրվաքականը կտրուկ ավելացնելու անհրաժեշտության առջև: Այդ նպատակով ՀՀ 1920 թ. սեպտեմբերի 30-ի կառավարության որոշումով հանրապետության ամբողջ տարածքում հայտարարվեց զինվորական դրություն⁵¹: Վերացվեցին արական սեռի 20-ից մինչև 35 տարեկան քաղաքացիների բոլոր արտոնություններն ու տարկետման իրավունքները⁵²: Բանակ զորակոչվեցին նաև մինչև 35 տարեկան զինապարտ քաղաքացիները⁵³, իսկ մի փոքր ավելի ուշ՝ 36-ից 37 տարեկանները⁵⁴:

ՀՀ կառավարությունը ընդունեց նաև զինված ուժերի շարքերում լայն տարածում ստացած դասալքության դեմ ուղղված մի շարք օրենքներ: Այսպես, 1919 թ. հուլիսի տվյալներով զինակոչից խուսափող նորակոչիկների ու զինապարտների թիվը ամբողջ Հայաստանում կազմում էր 17.665 մարդ⁵⁵, իսկ մարտական զորամասերը լքած զինվորների թիվը, միայն 1919 թ. մարտից

⁴⁶ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 65, թ. 129:

⁴⁷ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 45:

⁴⁸ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 85, թ. 306:

⁴⁹ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 45:

⁵⁰ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 188:

⁵¹ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 190, թ. 102:

⁵² Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 186, թ. 21:

⁵³ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 190, թ. 6:

⁵⁴ Տե՛ս Առյձ տեղը, էջ 128:

⁵⁵ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 89, թ. 348:

մինչև դեկտեմբեր, կազմել է 5.728 մարդ⁵⁶: Դասալքության մեծ շափերի հիմնական պատճառներն էին՝ երկարատև պատերազմը, որից ժողովուրդը հոգնել էր, և բանակում ծառայելու ծանր պայմանները (ըստ գեներալ Արարատյանի):

Դասալքության դեմ պայքարելու նպատակով ՀՀ կառավարությունն ընդունեց նաև այլ օրենքներ: 1919 թ. հուլիսի 24-ին ուժի մեջ մտավ «Մահապատժի մասին» օրենքը, համաձայն որի երկրում, որպես պատժի առավելագույն շափ, մտցվում էր մահապատիժը: Պատժի առավելագույն շափը տարածվում էր ոչ միայն դասալիք զինծառայողների, այլ նաև այն անձանց վրա, ովքեր դրդում էին նման գործողությունների⁵⁷: 1920 թ. օգոստոսին կառավարությունը հայկական բանակի հրամանատարությունները թույլ տվեց բոլոր զորամասերում ստեղծել ռազմա-դաշտային դատարաններ, որոնց իրավունք էր վերապահվում կիրառել 1919 թ. հուլիսի 24-ի օրենքը⁵⁸: Միևնույն ժամանակ խստագույն միջոցներ ձեռնարկվեցին այն անձանց նկատմամբ, ովքեր թաքցնում էին դասալիքներին: Այսպես՝ «Զորքերում դասալքության դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն իսկական զինապարտության մեջ գտնվող դասալիքներին թաքցնող անձինք, ինչպես նաև պահեստազորում զինվորական աստիճան ունեցող քաղաքացիները, ովքեր խուսափում էին իսկական զինվորական ծառայության համար զորակոչին կամ ուսումնական հավաքներին ներկայանալուց, ենթակա էին կալանքի երեքից մինչև չորս ամիս ժամկետով: Դասալիքների հետ բնակվող և միտումնավոր կերպով նրանց թաքցնող անձինք ենթարկվում էին կալանքի՝ մեկից մինչև վեց ամիս ժամկետով կամ դրամական տուգանքի՝ մինչև 10.000 ռուբլի, և զրկվում պետական նպաստներ ստանալու որևէ իրավունքից⁵⁹:

Սակայն, շնայած Հայաստանի Հանրապետության կառավարության ձեռնարկած այդ խիստ միջոցներին, դասալքությունը հայկական բանակում շարունակվում էր՝ լուրջ հարված հասցնելով նրա մարտունակությանը:

Կառավարության ուշադրության կենտրոնում էր նաև բանակի համար բարձրորակ կադրեր պատրաստելու խնդիրը: 1920 թ. վերջին հայկական բանակի սպայական կազմի մեծամասնությունը (հիմնականում կրտսեր) արդեն այն անձինք չէին, որոնք ծառայել էին նախկին ռուսական բանակում և ռազմական ուսուցում էին անցել ռուսական կադետական կորպուսներում և զինվորական դպրոցներում⁶⁰: Մտահոգված բանակի մարտունակության, ինչպես և ապագա սպայության ընդհանուր և ռազմական պատրաստակալությունը բարձրացնելու անհրաժեշտությունից, կառավարության ջանքերով 1920 թ. սեպտեմբերին Ալեքսանդրապոլում նախաձեռնվեց յոթամյա ռազմական գիմնազիայի և մեկամյա ուսուցմամբ զինվորական ուսումնարանի⁶¹ կազմակերպման աշխատանքներ: Ռազմական նախարարությունը այդ նպատակների համար հատկացրեց դրամական խոշոր միջոցներ: Ուսուցումը զինվորական գիմնազիայում պետք է տևեր յոթը տարի և նպատակ ուներ մանկահասակ անձանց մտավորապես, բարոյապես և ֆիզիկապես պատրաստել զինվորական ուսումնարան ընդունվելու համար⁶²:

Զինվորական ուսումնարանում պետք է պատրաստվեին սպայական կադ-

⁵⁶ Տե՛ս Աուլն տեղը, էջ 350:

⁵⁷ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 78, թ. 18:

⁵⁸ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 186, թ. 53:

⁵⁹ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 78:

⁶⁰ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 190, թ. 9:

⁶¹ Ուսման կարճատևությունը պայմանավորված էր բանակի շարժվող շտապ կարգով որակյալ սպաներով համալրելու անհրաժեշտությամբ:

⁶² Տե՛ս Աուլն տեղը, թ. 26, թ. 12:

րեր հետևակի, հրետանու և հեծելազորի համար: Այստեղ ընդունվող անձինք պետք է ունենային միջնակարգ կրթություն⁶³: Սակայն սկսված պատերազմի հետևանքով զինվորական ուսումնական հաստատությունների կազմակերպման գործը կիսատ մնաց:

Կառավարության որոշմամբ հաստատվեցին նաև մարտական շքանշաններ: 1919 թ. մայիսի 26-ի որոշման համաձայն հաստատվեց «Հայրենիքի ծառայության համար» շքանշանը, իսկ 1920 թ. հունիսի 2-ին՝ «Սուրբ Վարդան գորավար» և «Տրդատ Մեծ» շքանշանները⁶⁴: Նախարարների խորհրդին ռազմական նախարար Թուրքենի ներկայացրած զեկուցագրում նշվում էր, որ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ աստիճանի «Սուրբ Վարդան» շքանշանով պետք է պարգևատրվեին անձնական խիզախություն ցուցաբերած սպաներն ու զինվորները, իսկ հինգերորդ ու վեցերորդ աստիճանով՝ զորամասերի շտաբների հրամանատարներն ու պետերը՝ մարտական գործողությունների հմուտ ղեկավարման համար: Այս շքանշանը համապատասխանում էր ռուսական Գեորգիևյան խաչին և պետք է շնորհվեր ռուսական բանակում գոյություն ունեցող կանոնների համաձայն, մինչև սեփական կանոնադրության ընդունումը⁶⁵:

«Տրդատ Մեծ» շքանշանով պարգևատրվում էին սպաները՝ մարտական ծառայությունների համար: Այդ շքանշանով կարող էին պարգևատրվել նաև քաղաքացիական անձինք՝ հատուկ ծառայությունների համար: Ընդ որում, այդ շքանշանով պարգևատրված սպաներին հանձնվում էր նաև հատուկ զենք (սուր)⁶⁶:

Հայկական բանակում որպես ռազմական հրահանգիչ ծառայող անգլիացի սպա Օլիվեր Բուդվիլի հուշերից երևում է, որ նա պարգևատրվել է այդ շքանշաններից մեկով, սակայն չի նշվում, թե հատկապես ինչ շքանշանով⁶⁷: Հայտնի է նաև, որ «Սուրբ Վարդան» շքանշանով պարգևատրվել է գնդապետ Ն. Թարխանյանը (Կուռո)⁶⁸:

Այսպիսով, վերոշարադրյալը վկայում է, որ զինված ուժերի շինարարության հարցերը մշտապես եղել են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ընդունվել են մի շարք օրենքներ և որոշումներ, որոնք հնարավորություն են տվել ստեղծելու քիչ թեև շատ մարտունակ բանակ: Դժբախտաբար երկրի ներքին բարդ կացությունը և արտաքին քաղաքական անկայուն վիճակը հնարավորություն չտվեցին ավարտելու սկսված գործը: Միաժամանակ հարկ է խոստովանել, որ հաճախ կառավարության ընդունած լավ որոշումները չէին կատարվում և մնում էին թղթի վրա: Այնուամենայնիվ պետք է ընդգծել, որ պատմական կոնկրետ պայմաններում ՀՀ կառավարությունը հնարավոր ամեն ինչ արեց իր բանակի ստեղծման ու կենսագործունեության համար:

М. Л. КАРАПЕТЯН — Из истории создания вооруженных сил Армянской Республики (1918—1920 гг.). — История создания армии первой армянской Республики относится к числу наиболее недостаточно и необъективно изученных вопросов. Автор статьи в общих чертах прослеживает процесс и структуру становления вооруженных сил молодой Республики, подчеркивая важность и актуальность своего исследования во избежание повторения ошибок в деле построения нынешних вооруженных сил Армении.

⁶³ Տե՛ս նույն տեղում, թ. 27:

⁶⁴ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 154, թ. 137:

⁶⁵ Տե՛ս նույն տեղը, թ. 139:

⁶⁶ Տե՛ս նույն տեղը:

⁶⁷ Տե՛ս Օ. Բուդվիլի, Վեց բանտ և երկու հեղափոխություն, Ալեքսանդրիա, 1988, էջ 200:

⁶⁸ Տե՛ս Փ. Լազյան, Դեմքեր հայ ազատագրական շարժումեն, Գաֆիրե, 1949, էջ 388: